

---

ՎԱՀՐԱՍ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ. «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայա- նպաստ գործունեությունը. 1956–2006 թթ., *Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 272 էջ + 4 էջ ներդիր:*

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Վահրամ Ղարախանյանի սույն աշխատությունը միջազգային չափանիշի «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ազգանպաստ գործունեության գիտական հանգամանալի վավերագրման և համակողմանի վերլուծության առաջին հաջողված փորձն է: Գրքի խմբագիրն է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի ներկայիս տնօրեն, պատմաբանասեր, դոկտոր Զավեն Եկավյանը: Առաջին էջում հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում խմբագրին, ինչպես նաև՝ բաժանմունքի փոխտնօրեն Աստղիկ Չամբերթենին, որոնց անմիջական օժանդակությամբ մեծապես հարստացել և ամբողջական է դարձել ուսումնասիրվող նյութը:

Գալուստ Կյուլպենկյանի դիմանկարով, ինչպես նաև համանուն Հիմնարկության թանգարանի դասական հավաքածուի տեսարանով ձևավորված գրքի կազմ և պատշաճ տպագրություն ունեցող հատորը բացվում է Ամենայն Հայոց երջանկահիշատակ Վազգեն Ա. Պաճեան Կաթողիկոսի բնութագրական խոսքերով. «Գալուստ Կյուլպենկյան մահկանացու ծնվեց, բայց իր մարդասիրական մեծ իրագործումներով ժառանգորդ դարձավ անմահության: Օրհնություն նրա վաստակին, օրհնություն նրա հիշատակին, օրհնություն նրա կյանքի կոչած հիմնարկության» (էջ 5):

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք ծավալուն գլուխներից, վերջաբանից, հավելվածից և հարակից բաժիններից:

Ներածության մեջ Վ. Ղարախանյանն անդրադարձել է հայոց բազմադարյա պատմության ընթացքում ազգային բարեփրական ավանդույթների առկայությանը:

Հայոց անցյալի ու ներկայի բարեգործ անհատների ու կազմակերպությունների ողջ ներկայանկում իր առանձնահատուկ և ուրույն տեղն ունի համաշխարհային նավթարդյունաբերության հիմնադիրներից՝ հայազգի Գալուստ Կյուլպենկյանը, որը հայտնի էր «Հայ Կրեսոս», «Պարոն Հինգ Տոկոս», «Նավթային Դիվանագիտության Թալեյրան», «Նավթի Հայ Արքա» և նմանատիպ այլ անվանումներով: Սփյուռքահայ մամուլի բնորոշմամբ, նա ոչ միայն «...կը մտնե մեծանուն բարերարներու ակումբին մեջ համազգային չափանիշով» (էջ 13, «Ազատ օր» օրաթերթ, Աթենք, 1969, 15 Ապրիլի, թիվ 7335), այլև «...Գալուստ Կյուլպենկյան բուրբ կտակարարներուն մեջ գազաթնացավ համազգային չափանիշով, տիրանալով նաև միջազգային բարերարի պատվաբեր անունին» (էջ 12, «Ազդակ» օրաթերթ, Պեյրութ, 1964, 11 փետրվարի, թիվ 281 (9721):

Թեև Գալուստ Կյուլպենկյանը որոշ հատկացումներ նախատեսել էր Երուսաղեմի Հայոց Պատրիարքության գրադարանին, Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հայկական ազգային հիվանդանոցին և Ս. Էջմիածնի Մայր Տաճարին, սակայն քանի որ բարերարն իր կտակում չէր հասցրել նշել Հայկական բաժանմունք ստեղծելու մասին, այդտեղից էլ Գ. Կյուլպենկյանի անվան շուրջ ստեղծված այն թյուրըմբռումը, թե՛ «...օտարներու մեջ այնքան մեծ համբավ ունեցող միլիոնատեր Գալուստ Կյուլպենկյան կը մեկնի այս աշխարհեն առանց իր բազմակարոտ ազգին նշանակալից օգտակարություն մը ունենալու» (էջ 17): «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1955, 14 փետրվարի, թիվ 36 (5098)): Ինչպես նշել է Վ. Ղարախանյանը, այս բացը լրացնելու և Գ. Կյուլպենկյանի մահից հետո նրա վերջին խնդրանքն իրավաբանորեն ամրագրելու գործում անգնահատելի ու հիմնարար դեր են կատարել վերջինիս անձնական փաստաբան, հետազայում՝ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության առաջին

նախագահ ժողով Ազերեդո դը Պերդիգանը, Գ. Կյուլպենկյանի դասեր ամուսինը՝ Գևորգ Եսայանը և կտակարարի եղբոր՝ Վահան Կյուլպենկյանի որդին՝ Ռոբերտո Կյուլպենկյանը (էջ 16-17): Արդյունքում, Հիմնարկության կազմում ստեղծված Հայկական բաժանմունքի բյուջեի զգալի մասը ծախսվել է մինչև օրս ծախսվում է երեք տասնյակից ավելի երկրների հայկական համայնքների կարիքները հոգալու համար:

Հայկական բաժանմունքի կրթաթոշակներից օգտվել և օգտվում են առաջադիմությամբ աչքի ընկած, սոցիալապես անապահով հայ աշակերտներն ու ուսանողները, կառուցվել, վերանորոգվել, կահավորվել են բազմաթիվ հայկական դպրոցներ: Բաժանմունքն աջակցում է հայերեն գրքերի տպագրությանը, նպաստում հայագիտության զարգացմանը Եվրոպայի և աշխարհի տարբեր երկրների համալսարաններում՝ հիմնադրելով հայագիտական ամբիոններ: «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության միջոցներով են հրատարակվում հայրենի և Սփյուռքի մի շարք գիտական պարբերականներ, ինչպիսիք են «Բազմավեպը», «Հանդես ամսօրյան», «Revue des Etudes Armeniennes», «Պատմաբանասիրական հանդեսը» և այլն:

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Հայկական բաժանմունքը Խորհրդային Հայաստանի, ապա Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության և առողջապահության զարգացման նպատակով տրամադրել է տարեկան շուրջ կես միլիոն դոլարի նպաստ: 1989 թվականից Հայաստանը ստացել է բժշկական որակյալ սարքավորումներ և դեղորայք: Զգալի նյութական միջոցներ են հատկացվել Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանին, Երևանի պետական համալսարանին, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներին և հիմնարար գրադարանին: Հայկական բաժանմունքի բյուջեից գատ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը 1988-1989 թթ. շուրջ 1 մլն դոլարի օգնություն է հատկացրել Հայաստանի ավերիչ երկրաշարժից տուժած շրջաններին (էջ 18-19):

Ներկայումս «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության տնօրենների ժողովի նախագահն է Էմիլիո Ռուի Վիլարը: Հայկական բաժանմունքի վարիչ տնօրեններն են եղել Գևորգ Եսայանը, Ռոբերտո Կյուլպենկյանը, Միքայել Եսայանը: 1985 թվականից մինչև օրս բաժանմունքը ղեկավարում է դոկտոր Զավեն Եկավյանը: Հայկական ծրագրերի աշխատանքների համար պատասխանատու են ութ աշխատակիցներ, ներառյալ Պողոս Նուբարի ծոռնուհին՝ Աստղիկ Չամբերթենը (էջ 19): Նրանցից յուրաքանչյուրն առանձին և բոլորը հավաքաբար արթուն պահել և պահում են «...հայի ոգին «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության մեջ՝ աչալուրջ հսկելով բոլոր հայկական ձեռնարկների վրա՝ Էջմիածնից մինչև Սփյուռքի հեռավոր անկյունը» (էջ 84, «Խթան», Փարիզ, 1958, 17 Յուլիսի, թիւ 162):

Ներածության մեջ ներկայացված է նաև օգտագործված գրականության տեսություն: Աշխատությունը շարադրելիս Վ. Ղարախանյանը հիմք է ընդունել ինչպես Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի նյութերը, այնպես էլ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության տարեկան հաղորդումները, ինչպես նաև օգտվել է թեմային առնչվող հայերեն, պորտուգալերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն աշխատություններից, գիտական ամսագրերում, պարբերական մամուլում և համացանցում լույս տեսած հոդվածներից (էջ 237-244):

Աշխատության առաջին գլուխը հեղինակը վերնագրել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հիմնադրումը» և բաժանել էրեք ենթագլուխների՝ ա. Գալուստ Կյուլպենկյանի կյանքն ու գործունեությունը, բ. «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հիմնումը, կանոնադրությունը և բաժանմունքները, գ. հայկական համայնքների ծառայության բաժանմունքի ստեղծումը: Այստեղ Վ. Ղարախանյանը ներկայացնում է արմատներով կեսարացի Գալուստ Կյուլպենկյանի (1869 թ. մարտի 23, Կ. Պոլիս, Սկյուտար թաղամաս - 1955 թ. հուլիս 20, Լիսաբոն) կենսագրական տվյալները՝ նշելով, որ ապագա խոշոր նավթարդյունաբերողը նախնական կրթությունը ստացել էր Կ. Պոլսի Քատրգյուլ թաղամասի Արամ-

յան-Ունձյան դպրոցում, ապա՝ ֆրանսիական Սուրբ Հովսեփ վարժարանում: 1884 թ. մեկնել է Մարսել, այնտեղից՝ Լոնդոն, ուր ընդունվել և 1887 թ. գերագանցությամբ ավարտել է հայտնի Քինգզ կոլեջի ինժեներական արվեստ և կիրառական գիտություններ բաժինը՝ ստանալով ինժեներ-շինարարի որակավորում:

1898 թ. Գ. Կյուլպենկյանին է վստահվում Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում օսմանյան դեսպանությունների տնտեսական խորհրդատուի պաշտոնը, որը, ինչպես նշում է Վ. Ղարախանյանը, «...բրիտանական քաղաքացիության հետ մեկտեղ ապահովում է նրա հզոր քաղաքական ու տնտեսական դիրքերն ինչպես Եվրոպայում, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքում, հատկապես Օսմանյան կայսրությունում» (էջ 36):

Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ 1942 թ., Գ. Կյուլպենկյանը հաստատվում է Պորտուգալիայում՝ այն համարելով ապահով և բարենպաստ երկիր (էջ 59):

Վ. Ղարախանյանը համառոտ անդրադարձել է նաև Գ. Կյուլպենկյանի՝ որպես Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահի (1930-1932 թթ.) գործունեությանը և հրաժարականին (էջ 46-47): Գ. Կյուլպենկյանի համար ՀԲԸՄ նախագահի պաշտոնից հրաժարումը իր բազմաչարչար ազգին ու հայրենիքին օգտակար լինելու հրաժարական չէր, այլ, ինչպես ինքն է գրել, «...Արդ, բացարձակապես հրաժարականս մատուցանելով հանդերձ, միանգամայն կը պահեմ իմ գուրգուրանքս Ազգիս միակ մխիթարություն Հայաստանի լուրջ բարգավաճման համար, իբրև հայրենի ավանդության նվիրական պարտականություն» (էջ 48), Դալլաքյան Կարլեն, Հ.Բ.Ը. Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Երևան, 1996, էջ 6), քանի որ դաստիարակված էր այդ ոգով. «...իմ ընտանիքի ավանդությունը երբեք ինձ ուսուցած չէ զոհել ազգային շահերը անձնական զգացումներին ու նկատառումներին, և կամ թե գործից խուսափիլ, երբ մեր Ազգին իրապես օգտակար մի ծառայություն մատուցանելու առիթ է ներկայացած» (էջ 47-48):

Աշխատության մեջ հեղինակը մանրամասն անդրադարձել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և նրա կազմում հայկական բաժանմունքի ստեղծմանը: Նավթային մագնատի մահից երեք օր անց՝ 1955 թ. հուլիս 23-ին, նրա խորհրդատու և փաստաբան դոկտոր Ժոզե Ագերեդո դը Պերդիգանը բացել է կտակը: Գ. Կյուլպենկյանն իր հարստությունը՝ 300 մլն անգլիական ոսկի, նաև արվեստի գործերի հարուստ հավաքածուն (ավելի քան 6 հազ. նմուշ) և նավթարդյունաբերության մեջ ունեցած շահաբաժինը, պորտուգալական օրենքների համապատասխան, կտակել էր Լիսաբոնում ստեղծվելիք համանուն հիմնարկությանը: Եթե սկզբում՝ 1955 թ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կանոնադրական կապիտալը շուրջ 65 մլն ԱՄՆ դոլար էր, ապա արդեն 2006 թ. հաստատության նյութական կարողությունը կազմել է ավելի քան 3 մլրդ եվրո (էջ 55, 62-64): Հերքելով այն թյուր տեսակետները, թե Հիմնարկությունը ծառայում է միայն մեկ ժողովրդի՝ պորտուգալացիներին, և կամ՝ միայն հայ ժողովրդին չճանաչելու վերաբերյալ քննադատությունները, հետազոտողը հիմնավորել է այն փաստը, որ իբրև միջազգային կառույց այն կոչված է ծառայելու համայն մարդկությանը, քանի որ, ինչպես Գ. Կյուլպենկյանն էր հավաստում, «Միայն Հայերուն չէ որ պարտական եմ օգնել, այլ օտարներու ալ, մանավանդ որ անոնցմե միայն դրամ շահած եմ և անոնց հետ գործի կապեր ունիմ» (էջ 79), «Արև», Գահիրե, 1957, 11 մարտի, թիվ 11.626): Հետագայում Հիմնարկությունն իր ներկայացուցչական կենտրոնատեղիներն է հիմնել Լոնդոնում, Փարիզում, Բեյրութում, Հալեպում և այլուր (էջ 59):

Հաստատության նպաստառու երկրների ցանկը յոթ տասնյակից ավելի է՝ ներառելով ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ավստրալիան, Ճապոնիան և այլն: Իրաքը Մերձավոր Արևելքում Հիմնարկության իրականացրած բարեգործական ծրագրերի առաջին տեղում էր, քանի որ հաստատության հասույթների գերակշիռ մասը գոյանում էր այս երկրի տարած-

քում գտնվող նավթահորերից: 1960-ական թվականներին Բաղդադում կառուցվել էր նաև «Հին արվեստի թանգարանը» և գլխավոր մարզադաշտը (էջ 71-72): Հիմնարկությունը համագործակցում է եվրոպական և համաշխարհային բազմաթիվ հիմնադրամների և կառույցների հետ, մասնակցում տարբեր գիտաժողովների, համաժողովների, խորհրդաժողովների, ծրագրերի և այլն (էջ 73-74):

Աշխատության մեջ լույս է սփռված նաև կարևորագույն և մինչև վերջերս վիճահարույց հարցին՝ Հայկական բաժանմունքի ստեղծմանը, քանի որ, ինչպես նշում է հեղինակը, «Չնայած Գ. Կոլպենկյանի կտակում հայկական բաժանմունք ստեղծելու մասին չկա որևէ կետ, սակայն հիմնարկության հիմնադրումից ի վեր գործում է նաև այդ մարմինը» (էջ 75): Հեղինակը, մեջբերելով ժամանակի պետական գործիչ և գիտնական Կարլեն Դալլաքյանի հոդվածը, նշում է, որ վերջինիս Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը հաղորդել էր կտակակատար-փաստաբան Ժ. Ա. դր Պերդիգանի անձամբ իրեն փոխանցած տեղեկությունը, թե «...Գ. Կոլպենկյանը մահվան մահճում շնչացել է Պերդիգանին՝ Հիմնարկության կազմում Հայկական բաժին ունենալու մասին իր կամքը», ինչը և Պերդիգանը Գ. Կոլպենկյանի փեսա, հետագայում՝ Հայկական բաժանմունքի ղեկավար Գևորգ Եսայանի, ինչպես նաև եղբորորդի Ռոբերտո Կոլպենկյանի հետ անհապաղ իրականացրել է (էջ 76, Դալլաքյան Կարլեն, Գալուստ Կոլպենկյան Հիմնարկությունը (Գեսդարյա հոբելյանի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2006, թիվ 3, էջ 8): Ապա Վ. Ղարախանյանը վերլուծում է Սովետական Հայաստան – Գ. Կոլպենկյան հարաբերությունները ժամանակաշրջանի լույսի ներքո, մեջբերելով Բ. Ստալինի խիստ բնութագրական հետևյալ խոսքերը. «Եթե հայ կապիտալիստները հիմարություն են թույլ տալիս, օգնելով հայ կոմունիստներին կառուցել սոցիալիզմ, ապա Հայաստանի կոմունիստները թույլ կտան ավելի մեծ հիմարություն, եթե հրաժարվեն այդ օգնությունից» (էջ 78, Մելքոնյան Էդուարդ, Հայկական Բարեգործական

Ընդհանուր Միության պատմություն, Երևան, «Մուղնի» հրատ., 2005, էջ 282): Մինչդեռ իրականում, ինչպես վերլուծում է հեղինակը, ընկերային-քաղաքական օբյեկտիվ հանգամանքների բերումով կոմունիստական «Հայաստանը, որպես Գ. Կոլպենկյանի հարստության հավանական ժառանգորդ երկիր, դուրս էր հայ մեծահարուստի, այլ ոչ թե Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաշվարկներից, որի պատճառները միանգամայն օրինաչափ էին» (էջ 78), ինչպես որ «Գ. Կոլպենկյանի նման մեծահարուստ մարդու համար անկարելի էր իր ահռելի կարողությունը թողնել Միությունի ազգային որևէ կազմակերպության՝ կաթողիկոսարանի, պատրիարքարանի, բարեգործական հաստատության կամ, առավել ևս, քաղաքական կուսակցության և հանգիստ խոճով հեռանալ աշխարհից» (էջ 80): Այդ ամենի մասին ժամանակին «Զարթոնք» բացառիկը ճշմարտացի գնահատական է տվել, գրելով. «Վստահությունը չէ որ կը կաղա հոս ազգին հանդես, այլ անոր վարչական մեքենան է որ կը կաղա ու պիտի կաղա, ցորչափ պետական վերին անաչառ ու խիստ հակակշիռ սը կը պակսի ազգային հաստատությանց գլխուն» (էջ 80, «Զարթոնք», 25-ամյակի բացառիկ, Պեյրութ, 1962, սեպտեմբեր, էջ 336): Ինչպես նշում է հեղինակը, «...1960-ական թվականներին սկսված հայ ազգային զարթոնքն ու խորհրդային չափավոր դեմոկրատացման քաղաքական խմորումները չէին կարող վրիպել թե՛ Պերդիգանի, թե՛ Ռոբերտո Կոլպենկյանի ուշադրությունից», որոնք «...ծրագրել էին ամուր կապեր ստեղծել Հայաստանի հետ, որի բազմաթիվ գիտական, առողջապահական, կրթական ու մշակութային կազմակերպություններ հնարավորություն կունենային ոչ միայն զինվելու արտասահմանյան ժամանակակից, որակյալ ու թանկարժեք տեխնիկայով, այլև զարկ տալու գիտական հետազոտություններին, կրթության զարգացմանը, մշակութային ձեռնարկումներին և այլն» (էջ 92-93):

Աշխատության երկրորդ գլխում՝ «Հիմնարկության Հայկական բաժանմունքի իրականացրած ծրագրերը», հեղինակը կենտրոնացել է հետևյալ հարցերին՝ ա.

կրթամշակութային օջախների շինարարություն և վերանորոգում, բ. կրթաթոշակների և դրամաշնորհների ծրագիր, գ. աջակցություն հայկական հոգևոր հաստատություններին, դ. առողջապահական և խնամատարական ծրագրեր, ե. մշակութային ձեռնարկումներ:

Այս գլխում Վ. Ղարախանյանը մանրակրկիտ անդրադարձել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Հայկական բաժանմունքի կողմից Սփյուռքի հայկական յուրաքանչյուր համայնքին (Սիրիա, Լիբանան, Իրան, Հորդանան, Թուրքիա, Իրաք, Ֆրանսիա, Հունաստան, ԱՄՆ, Հարավային Ամերիկայի և այլ երկրներ), ինչպես նաև Հայաստանին, կատարած հատկացումներին (էջ 103–144): Առանձին-առանձին կանգ է առնված Հիմնարկության կողմից իրականացված և ընթացքի մեջ եղող ծրագրերին՝ հայությանը հատկացվող դպրոցական, համալսարանական կրթաթոշակներին, դպրեվանքի ուսանողներին, մանկավարժներին, գիտնականներին տրամադրվող նպաստներին, ազգային հոգևոր հաստատություններին ցուցաբերված աջակցությանը, առողջապահական և խնամատարական ծրագրերին, մշակութային ձեռնարկումներին: Հիմնարկությունը համագործակցում է հայ ազգային և միջազգային բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ, որի արդյունքում տարբեր երկրներում կառուցվել են հայկական ազգային դպրոցներ, ծերանոցներ, կարիքավորների խնամքի կենտրոններ, գաղթականների համար բնակարաններ և այլն: Թեպետ հատկացումներ են կատարվել ու կատարվում Սփյուռքի գրեթե բոլոր կառույցներին, այնուամենայնիվ գործունեության հիմնական ոլորտը եղել և մնում է Սիրիան, Լիբանանը, ինչպես նաև Թուրքիան (էջ 145–189, 212): Այնպես որ, թեպետ «...Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը իր կազմով հայ ազգային մարմին մը չէ, բայց, անոր ցարդ ունեցած իմաստուն գործունեությունը կը հաստատե, որ ինք շատ լավ կ'ըմբռնե տարագիր հայ ժողովուրդի ազգային գոյապահպանման մտահոգությունները և ատոր համար այլ իր հայկական հատկացումներու 90 տոկոսը կեղորոնացուցած է կրթական-մշակութային

ձեռնարկներու վրա», – գրել է «Ազդակ» օրաթերթը (էջ 91):

Վ. Ղարախանյանն իր աշխատության երրորդ գլխում անդրադարձել է «Բաժանմունքի նպաստը գիտության զարգացմանը Հայաստանում և Սփյուռքում» հարցին և քննարկվող նյութը խմբավորել է հետևյալ ենթաբաժիններում՝ ա. հատկացումներ գիտական հաստատություններին, բ. հայագիտության զարգացմանն ուղղված ծրագրեր, գ. հայագիտական հրատարակություններ:

Հեղինակը ներկայացրել է Հիմնարկության ցուցաբերած աջակցությունը Երևանի պետական համալսարանին, Մատենադարանին, գիտությունների ազգային ակադեմիային, ինչպես նաև՝ տարբեր երկրների համալսարաններում (Օքսֆորդ, Լոս Անջելես, Հարվարդ, Սպահան, Լուվեն, Լեյդեն, Լոնդոնի համալսարանի Արևելյան և աֆրիկյան ուսումնասիրությունների դպրոց, Էլոնի կաթոլիկ ինստիտուտ և այլն) հայագիտական ամբիոնների ու գրադարանների հիմնմանը: Հիմնարկության գործադրվող ծրագրերից է նաև աշխարհի գիտական տարբեր հաստատությունները հայագիտական գրականությամբ ապահովելու նպատակով կատարված հատկացումները, ազգային դասագրքերի, հայագիտական աշխատությունների և պարբերականների հրատարակումը, միջազգային գիտաժողովների անցկացմանը նյութապես սատարելը, հայկական ուսումնասիրություններում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, միկրոֆիլմերի և թվային գրադարանների ստեղծումը և այլն: 1959 թվականից Հիմնարկությունը նախաձեռնել է «Հայկական Մատենաշար Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության» անվանումով հայագիտական մատենաշարի հրատարակությունը, որով լույս են տեսնում հայ մշակութային ու քաղաքակրթության վերաբերյալ ուսումնասիրություններ, հին անտիկ բնագրեր, ինչպես նաև հայ և օտար աշխատությունների երկկողմ թարգմանություններ և այլն (էջ 191–208):

Ընդհանուր առմամբ, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության միջոցներով մինչև օրս հրատարակվել է հայագիտական ավելի քան 500 անուն աշխատություն: Վ. Ղարախանյանի գրախոսվող սույն աշխատությունը

տությունը ևս հրատարակվել է Հիմնարկության մատենաշարով: Պատահական չէ, որ Հիմնարկության հայկական բաժանմունքի ներկայիս տնօրեն, մտավորական-դոկտոր Զավեն Եկավյանը նշել է. «Բնօրինակ համար այսօր ամենակենսական հարցը հայապահպանության քաղաքականության մեջ գիտահետազոտական և հայագիտական հրատարակություններն են» (էջ 203-204):

Վերջաբանում հեղինակն ամփոփել է աշխատության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները: Ընդհանուր առմամբ, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունն իր կետարյա գոյության ընթացքում Մփյուռքին և Հայաստանին ցուցաբերած իր տարեցտարի աճող օժանդակությամբ իրականացրել է շուրջ 120 միլիոն դոլարի հատկացում: Նշված թիվը ներկայիս արժույթային հաշվարկներով կազմում է ավելի քան կես միլիարդ ԱՄՆ դոլար (էջ 212):

Հավելվածն ընդգրկում է «Կենսագրական համառոտ ակնարկ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և հայկական բաժանմունքի հայագի դեկավարների» մասին, որտեղ ներկայացված են տարբեր ժամանակահատվածներում Հիմնարկության դեկավարներ Գևորգ Եսայանի, Ռոբերտո Կյուլպենկյանի, Միքայել Եսայանի, Կորյուն Քեշիշյանի, Վահրամ Մավյանի, Մարտին Եսայանի և Զավեն Եկավյանի կենսագրականները (էջ 217-224): Այդուսակների տեսքով ներկայացված են 50 տարիների ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կատարած հատկացումները (1956-2006 թթ.)» (էջ 225-235):

Աշխատությունն օժտված է նաև օգտագործված աղբյուրների և գրականության ցանկով, անգլերեն և ռուսերեն ամփոփումներով, անձնանունների և տեղանունների ցանկերով, չորս էջից բաղկացած գունավոր լուսանկարների ներդիրով:

Գատարված է բարեխիղճ, խնամքով, աշխատատար ու հանգամանալից ուսում-

նասիրություն, որն արժանի է թարգմանվելու օտար լեզուներով, մասնավորապես՝ անգլերեն ու պորտուգալերեն, ինչն անկասկած վայել կլինի Գալուստ Կյուլպենկյանի միջազգային հիշատակին:

Վ. Ղարախանյանի «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ.» աշխատությունը կարևոր ներդրում է հայ իրականությանը բնորոշ և պատմական գրեթե բոլոր ժամանակաշրջաններում առկա ազգային բարեսիրական կազմակերպությունների պատմության ուսումնասիրման ասպարեզում ընդհանրապես, և մասնավորապես՝ հանձին «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության, մեզանում բարեգործական ավանդույթների վերհանման, ինչպես նաև՝ հայկական ինքնության առավել բացահայտման ու արդի պայմաններում գործնական օրինակ ծառայելու առումով: Այն նաև խոսուն վկայություն է համաշխարհային ասպարեզում ու համամարդկային արժեքների հանդեպ Մեծ Հայի ունեցած նշանակալի դերի և մատուցած նպաստի մասին:

Սույն հիմնարար հետազոտությունը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կետարյա ազգանպաստ մնայուն գործունեության խոսուն և փաստալից տարեգրությունն է, որը նաև ժամանակի ու պատմության ըստ արժանվույն գնահատական-հուշակոթող է ինչպես Գալուստ Կյուլպենկյան Հային, նույնպես և Հիմնարկության հայկական բաժանմունքի հայասեր անձնակազմին:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի գործունեությունը լուսաբանող և արժևորող սույն տարողունակ աշխատությունը, ներկայումս Հայաստանում լույս աշխարհ գալով, իր գիտագործնական նշանակությամբ կարող է յուրատեսակ խորհրդանշական այցեքարտ դառնալ Մայր Հայրենիքում ևս մասնաճյուղ հիմնելու առումով:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՑԱՆ